

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

29.04.2020թ.

Արձանագրություն թիվ 8

1. ՀՀ ԿԳՄՄՆ գիտության կոմիտեի և հիմնարար հետազոտությունների ռուսաստանյան հիմնադրամի կողմից անցկացվող «Գիտական հետազոտությունների համատեղ ծրագրերի աջակցության միջազգային մրցույթ»-ին մասնակցության հայտերի վերաբերյալ.

1.1. Երաշխավորել «Բնակչության պարենային անվտանգության և ապահովության հիմնախնդրի վճռման ուղիները տնտեսական աճի պայմաններում. ՌԴ և ՀՀ համեմատական տնտեսավիճակագրական վերլուծություն» անվանումով միջազգային մրցույթին մասնակցության հայտը:

1.2. Երաշխավորել «Լուիկի խորը վերամշակման գիտական հիմքերի մշակումը մարդու սննդային ախտաբանության պոլիոգոլոգիական կանխարգելման համար լիկոպին պատրաստուկի և գյուղատնտեսության համար պրոբիոտիկների ստացմամբ» անվանումով միջազգային մրցույթին մասնակցության հայտը:

1.3. Երաշխավորել «Տարբեր ցեղատեսակների հավերի ջերմային սթրեսին հարմարվողականության մեծացման նպատակով գեների արտահայտվածության և մանրէալ կազմի կարգավորում» անվանումով միջազգային մրցույթին մասնակցության հայտը:

1.4. Երաշխավորել «Հացահատիկի ենթահամալիրի զարգացման հեռանկարները և արտադրության ծավալների հիմնավորումը հայ-ռուսական առևտրատնտեսական հարաբերությունների համատեքստում» անվանումով միջազգային մրցույթին մասնակցության հայտը:

1.5. Երաշխավորել «Անջրդի պայմաններում պոլիմերամիներալային նյութի կիրառումը աշնանացան ցորենի սերմացուի և թույայի ջրային ռեժիմների կարգավորման համար» անվանումով միջազգային մրցույթին մասնակցության հայտը:

1.6. Երաշխավորել «Կենսատեխնոլոգիայի և մոլեկուլային կենսաբանության մեթոդների կիրառումը՝ տաքդեղի բիոտիկ և աբիոտիկ գործոնների հանդեպ կայուն սելեկցիոն զծերի ստացման համար» անվանումով միջազգային մրցույթին մասնակցության հայտը:

1.7. Երաշխավորել «ՀՀ ագրոէկոհամակարգերում ածխածնի ժամանակային դինամիկան և արտադրական ներուժը հիդրոթերմային ռեժիմի փոփոխման դեպքում» անվանումով միջազգային մրցույթին մասնակցության հայտը:

1.8. Երաշխավորել «Լեռնային երկրագործությունում հողի շերտավոր մշակման համապիտանի ազդեցատի մշակում և ներդրում» անվանումով միջազգային մրցույթին մասնակցության հայտը:

2. Հեռավար եղանակով ստուգարքների, քննությունների եվ ամփոփիչ ատեստավորման անցկացման կարգի վերաբերյալ.

Հաստատել «Հեռավար եղանակով ստուգարքների, քննությունների եվ ամփոփիչ ատեստավորման անցկացման կարգ»-ը:

ՀԵՌԱՎԱՐ ԵՂԱՆԱԿՈՎ ՍՏՈՒԳԱՐՔՆԵՐԻ, ՔՆՆՈՒՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳ

Հաշվի առնելով Հանրապետությունում հայտարարված արտակարգ դրությունը և ամբողջ աշխարհում առկա իրավիճակը՝ Հայաստանի ազգային ազրարային համալսարանի Գիտական խորհուրդը որոշում է.

2019-2020 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանը, ինչպես նաև ամփոփիչ ատեստավորումը անցկացնել հեռավար եղանակով: Ըստ այդմ՝ ստուգարքներին, քննություններին, ամփոփիչ ստուգման այլ ձևերին փոխարինելու են առցանց եղանակները:

Հաշվի առնելով, որ առցանց եղանակը ընդամենը գիտելիքների ստուգման այլընտրանքային եղանակ է, և բովանդակային առումով չի տարբերվում առկա եղանակից, ուստի բոլոր անձանց համար հավասար պայմաններ ստեղծելու և թափանցիկությունն ապահովելու միտումներով, ՀԱԱՀ գործող կարգերով սահմանված դրույթներին զուգահեռ առցանց ստուգումների /տույն կարգի իմաստով Քննություն նշանակում է գիտելիքների ստուգման բոլոր ձևերը, բացառությամբ այն դեպքի, երբ այն իմաստով կարող է վերաբերել միայն բուն քննությանը/ ժամանակ.

1. Քննվող անձը պետք է ապահովի իր միայնակ ներկայությունը իր ընտրած սենյակում, որտեղից կմիանա ուղիղ կապով:
2. Քննության ընթացքում, երբ ուսանողը ստացել է հանձնարարություն / տոմս, պարտադիր է նրա մշտական ներկայությունը տեսախցիկի առջև՝ միացված բարձրախոսով:
3. Եթե քննվող անձը մտադիր է պատրաստվելիս գրավոր նշումներ կատարել, ապա նման նշումները թույլատրելի են միայն թղթային տարբերակով՝ /ոչ համակարգչային ֆայլի մեջ/:
4. Քննություններն առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով, համապատասխան դեկանատի որոշմամբ, հնարավոր է տվյալ կուրսի քննությունները կազմակերպել առավել փոքր խմբերով:
5. Յուրաքանչյուր կուրսի համար նախատեսված քննությունների անցկացման ժամանակացույցը նախապես տեղադրվում է ՀԱԱՀ կայքում, իսկ քննության մասնակցության անհրաժեշտ ինդենտիֆիկատորը ստանալու համար ուսանողը նախապես դիմում է ֆակուլտետի դեկանատ /դասախոսը նախապես պետք է այն տրամադրի/:
6. Քննության համակարգողը հանդիսանում է տվյալ դեկանատը, որն էլ իրականացնում է քննության ձայնագրման և դրա պահպանման գործընթացը (ձայնագրառումները պահպանվում են առնվազն վեց ամիս):

7. Տվյալ կուրսի բոլոր ուսանողներն ազատ են առցանց հետևելու քննության ընթացքին, սակայն ընթացող քննության տվյալ փուլին մասնակցում են այն ուսանողները, որոնք քննական տոմս են ստացել ըստ մատյանում իրենց անվան հերթականության: Եթե ընտրված քանակը չի լրանում քննվողի չներակայանու պատճառով, ապա քանակը լրացնում է հաջորդ անձը:

8. Տոմս ստանալուց հետո քննվողին պատրաստվելու համար տրամադրվում է մինչև տասնհինգ րոպե: Քննվողը իր ցանկությամբ կարող է պատասխանել սահմանված ժամկետից շուտ:

9. Ուսանողը/սովորողը կարող է բողոքարկել քննության արդյունքը, դասախոսի կողմից գնահատականը հրապարակելուց անմիջապես հետո, քանի դեռ դուրս չի եկել հարթակից և քննողը չի սկսել հաջորդ անձի քննումը:

10. Ամփոփիչ ատեստավորման դեպքում Ուսանողը/սովորողը կարող է բողոքարկել քննության արդյունքը Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կողմից գնահատականը հրապարակելուց անմիջապես հետո:

11. Եթե որևէ պատճառով քննվող անձը խախտում է սույն կարգով սահմանված որևէ պահանջ, տվյալ ուսանողի համար հնարավորություն է ստեղծվում քննությունը հանձնել հաջորդիվ՝ որպես վերաքննություն՝ դրանից բխող բոլոր հետևանքներով:

3. ՀԱԱՀ ուսանողների գնահատման համակարգում 2019-20 ուստարվա երկրորդ կիսամյակի համար բազմագործոնային համակարգի բաղադրիչների փոփոխության հարցի վերաբերյալ.

2019-2020 ուստարվա երկրորդ կիսամյակի համար (նոր կորոնավիրուսով պայմանավորված իրավիճակից ելնելով) ուսանողների գնահատման բազմագործոնային համակարգում միջանկյալ քննության բաղադրիչին հատկացված մասնաբաժինն ավելացնել ամփոփիչ քննության (կամ ստուգարքի) բաղադրիչին:

4. Հեռակա ուսուցման դեպարտամենտի 2018-2019 ուստարվա վարձավճարների պարտքեր ունեցող ուսանողների ուսման վարձավճարների վճարման կարգի վերաբերյալ.

2019-20 ուստարի նոր փոխադրված և 2018-19 ուստարվա ուսման վարձավճարի պարտքեր ունեցող հեռակա ուսուցման դեպարտամենտի ուսանողների համար ուսման վարձավճարների պարտքերի մարման վերջնաժամկետ սահմանել 2020թ ապրիլի 30-ը:

ԳԻՏ. ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝  Վ.Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ

ԳԻՏ. ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝  Գ.Վ. ԱՎԱԳՅԱՆ